ՄԿՐՏԻՉ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ 1903 Թ. ՀՈՒՆԻՍԻ 12-Ի ՕՐԵՆՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Հայոց Եկեղեցու գույքի եւ կալվածքների բռնագրավման 1903 թ. հունիսի 12-ի օրենքի հրապարակման պահից ի վեր Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը դեմ էր դրա կիրառմանը:

Հունիսի 12-ի տխրահռչակ օրենքը շրջանառության մեջ դրվեց ընդունումից ավելի քան մեկ ամիս անց՝ 1903 թ. հուլիսի կեսերին: Օրենքի հրապարակման ձգձգումը հետազոտող Հայկ Աճեմյանն այն կապում է կառավարության գաղտնապահ լինելու հետ: Հրամանագրի գաղափարն առաջ էր քաշել եւ դրա հրատարակումը հաջողել էր հենց Կովկասի կառավարչապետ Գոլիցինը, որը այդ նույն ժամանակ գտնվում էր Պետերբուրգում: Օրենքի կիրառման պատասխանատվությունն ի պաշտոնե նրա վրա էր դրված: Գոլիցինը հուլիսի կեսերին նոր միայն վերադարձավ Թիֆլիս, եւ հենց այդ ժամանակ էլ հրապարակվեց օրենքը՝ առաջին հերթին ռուսական պաշտոնական մամուլով:

Ցարական իշխանությունը փորձում էր հայ ժողովրդին վստահեցնել, թե իբր կառավարության նպատակն է.

ա. Ավելի մեծացնել Լուսավորչական Եկեղեցու եկամուտները եւ հետեւողաբար նպաստել նրա բարգավաճմանը.

բ. Ապահովել աղքատ եւ չքավոր հոգեւորականներին, որոնց վիճակը այժմ չափազանց ողբալի է.

գ. Ազատել Եկեղեցին եւ նրա կալվածքները ապօրինի հափշտակությունից[1]:

Նման երաշխիքներ տալով թալանչիական օրենքին՝ կառավարության նպատակն էր մեղմացնել հայ ժողովրդի հավանական հուզումներն ու ընդվզումը:

Ընդունելով Հայ Եկեղեցու գույքի եւ կալվածքների բռնագրավման մասին օրենքը՝ ցարական իշխանությունները նպատակ ունեին ունեզրկել Հայոց Եկեղեցին:

Ըստ ցարական կառավարության պաշտոնյաների՝ Հայ Եկեղեցին իր

1 **Հայկ Աճեմյան**, Հայոց Հայրիկ (1820-1907), Պուենոս - Այրես, 1957, էջ 757:

կողմից հավաքագրվող գումարներով օգնում էր հայ հեղափոխական շարժումների ցույցերին, հովանավորում էր ազգային եւ ազատասիրական գործերը՝ նպատակ ունենալով ստեղծել Ազատ Հայաստան[2]:

Օրենքի պաշտոնապես հրապարակումից հետո Կովկասի հայաբնակ բոլոր վայրերի զինվորական եւ ոստիկանական մարմինները Գոլիցինից ստացան շտապ եւ կտրուկ շրջաբերականներ, որոնցով պահանջվում էր բռնագրավել եկեղեցական կալվածքներն ու հարստությունները, չտալ բողոքելու հնարավորություն, հսկել, որ հարստությունները չպահվեն, դիմադրության դեպքում զորք բերել: Դրամատները հրաման ստացան արգելքի տակ վերցնել հայոց ազգապատկան (եկեղեցապատկան) գումարները:

Էջմիածնի Սինոդին կարգադրեցին հանձնել գումարներն ու հաշիվները, թեմական առաջնորդներից պահանջեցին գումարների եւ գույքի ցուցակները, երեցփոխներին հրահանգեցին ծախսեր չանել եւ այլն[3]:

1903 թ. հունիսի 30-ին ՆԳ նախարար Պլեւեն ստորագրեց գույքի ընդունման կանոնները. դրանց համաձայն՝ գույքի ընդունումը պետք է սկսվեր կալվածքներից: Դրա համար նշանակված պաշտոնյան ոստիկանության, Եկեղեցու ներկայացուցիչների եւ ծխականների ներկայությամբ հոգեւորականությունից պետք է ստանար գույքամատյանները եւ ցուցակի համաձայն ընդուներ գույքը:

Ցարական կառավարության կողմից նշանակված ուսումնական շրջանի հոգաբարձուն, որը հետեւում էր Սինոդի աշխատանքներին, հուլիսի 15-ի շրջաբերականով պատվիրեց ճշտել եկեղեցական այն գումարներն ու գույքը, որոնցով պահվում էին հայկական դպրոցները, որպեսզի եկամտի այդ աղբյուրները համապատասխանաբար անցնեին ուսումնական վարչությանը: Նշանակվեցին գույք ընդունող հանձնաժողովներ. Էջմիածնի վանքի եւ գավառի գույքի ընդունման հանձնաժողովի նախագահ նշանակվեց Երեւանի փոխնահանգապետ Նակաշիձեն, քանզի հարկ էր լինելու գործ ունենալ Կաթողիկոսի հետ:

Գրաքննությանը ցուցում տրվեց արգելել օրենքի վերաբերյալ բացասական նյութերի հրատարակումը տեղական մամուլում[4]:

Բարձրաստիճան հայ հոգեւորականությունն օրենքի հրապարակման օրից ի վեր բազմաթիվ գրություններով ու նամակներով փորձում էր ճշտել Խրիմյանի դիրքորոշումը եւ իր բողոքի ձայնն էր բարձրացնում այդ թալանչիական օրենքի դեմ:

1903 թ. հուլիսի 16-ին Կ. Պոլսի հայոց պատրիարք Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը նամակ է ուղարկում Կաթողիկոսին՝ խնդրելով հունիսի

2 Տե՛ս **Հայկ Աճեմյան**, նշվ. աշխ., էջ 758:

3 Տե՛ս **Վահե Երկանյան**, Պայքար հայկական նոր դպրոցի համար, Երեւան, 1970, էջ 241:

4 Տե՛ս ՀՀԱԱ, ֆ. 56, ց. 16, գ. 349, թ. 4, ձեռագիր, բնագիր:

12-ի կայսերական որոշման մասին առավել մանրամասն տեղեկություններ տրամադրել:

Ըստ էության, այս նամակով Մաղաքիա արք. Օրմանյանը ոչ թե ի ցույց էր դնում իր անտեղյակությունը հունիսի 12-ի օրենքից, այլեւ հստակ արտահայտում էր իր անհամաձայնությունը՝ հիմքում դնելով հիմնավոր փաստարկներ. «...օրէնքի ընդունումը միջամտութիւն մը կ'ենթադրէ Ազգին հոգեւոր վարչութեան յատուկ գործերուն, եւ Հայ Եկեղեցւոյ պատկանեալ կալուածոց եւ գոյից սեփականութեան ու մատակարարութեան իրաւունքն կառնուի անոր ձեռքէն, եւ երկրորդ՝ վասնզի առանց փաստի ծանր ամբաստանութիւն մը կուղղուէ Հայ Եկեղեցւոյ պաշտօնէից դէմ, որոց վրայ հսկելու եւ ի հարկին՝ երբ ուրեւէ զեղծում գործուած լինի, կարեւորն ի գործ դնելու իրաւունքն կպատկանի Ամենայն Հայոց Ընդհանրական Հայրապետին:

Նկատելով ուրեմն, որ այդ կարգի տնօրինութիւն մը կրնայ շատ վնասակար հետեւանքներ ունենալ Հայ Եկեղեցւոյ համար եւ մտքերու մէջ մեծ գայթակղութիւն յառաջ բերել, նկատելով, որ մեր Եկեղեցին մի եւ անբաժանելի լինելով, Ազգն համօրէն, որ ի սփիւռս աշխարհի, մասնակից կգտնուի անոր ընդհանուր շահերուն եւ իրաւանց, ու համերաշխաբար զայնս պահպանելու պարտաւոր էմք եւ մեք, կհամարձակինք խնդիրը մատուցանելու Սրբազնասուրբ Հայրապետիդ խորին ուշադրութեան...»[5]:

1903 թ. հուլիսի 29-ին Էջմիածնի Սինոդին է ուղարկվում Կովկասի կառավարչապետի գրությունը, որով քաղաքացիական մասի հուլիսի 24-ի թիվ 1091 կարգադրության հիմնական պահանջն էր. «...հոգալ ի կատար ածել յունիսի 12-ի Բարձրագոյն հրամանը Հայ- լուսաւորչական եկեղեցական կալուածների եւ դրամագլուխների յանձնումը տեսչութեանը: Սինոդիդ խնդրում է ընդունելու Ներքին գործոց նախարարի առաջարկութիւնը՝ հարկադրել թեմական ատեաններին անյապաղ ի կատար ածել սոյն կարգադրութիւնը»[6]:

Հաջորդ իսկ օրը Կաթողիկոսի հրամանագրով Վեհարանի դահլիճում կազմակերպվում է հավաք, եւ Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռի միաբանությանն առաջարկում է խորհրդածության նյութ դարձնել կայսերական նոր հրամանը, Հայ Եկեղեցու գույքը եւ կալվածքները նոր եղանակով տնօրինելու մասին իրենց կարծիքն ու դիրքորոշումը ներկայացնել իրեն:

Խորհրդակցությունը նախագահող Սուքիաս արքեպիսկոպոսն առաջարկեց յուրաքանչյուրին՝ հայտնել, թե արդյո՞ք պետք է համակերպվել կառավարչապետի կարգադրությանը, թե՞ հարկավոր միջոցներ ձեռք առնել եկեղեցական կալվածքների կառավարման նախկին եղանակը պահպանելու համար:

Ժողովականները միաձայն որոշեցին խնդրել Հայրապետին, որի տնօրինության տակ էին գտնվում եկեղեցական բոլոր կալվածքները, գույքը եւ

5 ՀՀԱԱ, ֆ. 56, ց. 16, գ. 333, թ. 7, ձեռագիր, բնագիր:
6 ՀՀԱԱ, ֆ. 56, ց. 16, գ. 333, թ. 24, ձեռագիր, բնագիր:

դրամագլուխները, որպեսզի նա օրինական կարգով բողոքի կայսերը՝ չզրկելու Հայ Եկեղեցին իր բազմադարյա իրավունքներից եւ չդնի նրան անտանելի կացության մեջ[7]:

Սինոդի անդամները հունիսի 12-ի հրամանագրի կիրառման դեմ իրենց անհամաձայնությունն արտահայտեցին հրաժարականներով. Օգոստոսի 5-ին Սինոդի անդամներից Արիստակես արքեպիսկոպոսը, Մակար եպիսկոպոսը, Աշոտ եւ Մխիթար վարդապետներն իրենց պաշտոնից ազատելու խնդրանքով դիմեցին Մկրտիչ Ա. Կաթողիկոսին՝ այդ հանգամանքը ձեւակերպելով հետեւյալ կերպ. «...պ. դատախազն (Կանչելին) նորէն պահանջեց կազմել զօրագիր ըստ ցուցման եւ թելադրութեան իւրում՝ հակառակ օրինաց, որպիսի պահանջ Նորա դնէ զմեզ յանել վիճակի ի պաշտօնավարութեան մերում: Ուստի եւ այսու ամենախոնարհաբար մատուցանելով զհրաժարական մեր՝ խնդրեմք ի Վեհափառ Տեառնէդ մերմէ առնել զարժանին տնօրէնութիւն առ ի տալ արձակել զմեզ ի պաշտամանէ անդամութեան սինոդի»[8]:

Միաժամանակ նույն օրը Սինոդի վերոնշյալ անդամները կազմում են արձանագրություն առ այն, որ պարոն դատախազի հունիսի 12-ի հրամանագրի կիրառումն ապահովելու պահանջն ապօրինի է եւ այդ արձանագրության պատճենը ուղարկում են Կաթողիկոսին[9]:

Այս իրավիճակում Կաթողիկոսը դեռ չեր հասցրել իր դիրքորոշումն արտահայտել, երբ նույն օրը՝ օգոստոսի 5-ին, ստացվեց Ներքին գործերի նախարար Պլեւեի՝ Կաթողիկոսին ուղարկված գրությունը՝ կայսեր բարձրագույն հրամանն ի կատար ածելու պահանջով, որում մասնավորապես ասվում է. «Տեղեկանալով, որ հունիսի 12-ի Բարձրագույն հրամանի կատարումը եկեղեցական ստացվածքի մասին ձգձգվում է, խնդրում եմ Ձերդ Սրբազնությունից անմիջապես կարգադրություն անել այս մասին: Ամեն հապաղումն, որպես անհնազանդություն թագավորի կամքին, ծանր հետեւանքներ կունենա»[10]:

Օգոստոսի 6-ին Կաթողիկոսը հեռագրեց Պլեւեին՝ Հայ Եկեղեցու իրավունքների վերաբերյալ կառավարության նոր կարգադրության իրագործումն առժամանակ հետաձգելու խնդրանքով: Մկրտիչ Խրիմյանն իր խնդրանքը պայմանավորում էր այն հանգամանքով, որ կառավարությունն իրեն նախապես չի տեղեկացրել օրենքի մասին, ինչպես որ դա արվել է իր նախորդների օրոք, եւ հաստատում, որ հենց ինքն է օգոստոսի 4-ին թիվ 958 կոնդակով պատվիրել Սինոդին՝ չիրատարակել բարձրագույն հրամանը, մինչեւ որ ինքը հիշյալ խնդրով կդիմի Նորին Մեծության Կայսերը եւ կբացատրի հարցի հետ կապված հանգամանքները:

---

7 Տե՛ս ՀՀԱԱ, ֆ. 56, ց. 16, գ. 349, թ. 7, ձեռագիր, բնագիր:

8 **Վահե Երկանյան**, նշվ. աշխ., էջ 243:

9 Տե՛ս ՀՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 87, թ. 111-112, ձեռագիր, բնագիր:

10 ՀՀԱԱ, ֆ. 56, ց. 16, գ. 333, թ. 39, ձեռագիր, բնագիր:

Բացի իր սեփական դիրքորոշումն արտահայտելուց, Հայոց Հայրապետը հիշյալ հեռագրում ի ցույց է դնում այն հանգամանքը, որ օրենքի կիրառումը. «...կարող է խիստ ոչ ցանկալի հետեւանքներ ունենալ... որ յուլիսի 29-ին Ալեքսանդրապօլում, օգոստոսի 3-ին այստեղ Ս. Էջմիածնում ժողովրդական մեծ բազմութիւնը անձամբ, այլ նաեւ բոլոր համայնքները բազմաթիւ հանրագրերով ամեն օր աղերսում են ինձ արկանել առ ոտս Նորին Մեծութեանը աղաչանքն այս մասին»[11]:

Փաստորեն Կաթողիկոսն իր հեռագրով ապացուցում էր Պլեւեին, որ հիշյալ օրենքին անհամաձայնություն է ցուցաբերում ոչ միայն Հայ Եկեղեցին, այլեւ ողջ հայ ժողովուրդը:

Իր ամենօրյա գործունեությամբ Հայոց Հայրապետը ցանկանում էր ի չիք դարձնել հունիսի 12-ի տխրահռչակ հրամանագիրը:

Օգոստոսի 7-ին Մկրտիչ Խրիմյանը նամակ է ուղարկում Կ. Պոլսի հայոց պատրիարք Մաղաքիա արքեպիսկոպոսին՝ Հայ Եկեղեցու իրավունքների մասին որոշման դեմ Ռուսաց կայսերը բողոքագիր գրելու[12]:

Եկեղեցու գույքը չհանձնելու պայքարին են միանում նաեւ Ռուսահայոց թեմական առաջնորդները, որոնք օգոստոսի 9-ին իրենց իսկ կազմած արձանագրության մեջ փաստում են, որ Ռուսահայոց թեմերում գտնված ստացվածքները պատկանում են ոչ միայն Ռուսահայոց եկեղեցուն, այլեւ Տաճկաստանի, Պարսկաստանում բնակվող, աշխարհասփյուռ բոլոր հայերին եւ Հայ Եկեղեցուն: Այնուհետեւ նրանք իրենց իրավասությունից բարձր համարելով եկեղեցական գույքի հանձնումը եւ այդ պայմաններում դժվար համարելով պաշտոնավարությունը՝ ներկայացնում են իրենց հրաժարականները[13]:

Նույն օրը՝ օգոստոսի 9-ին, Կաթողիկոսը կոնդակով դիմում է Ամերիկայի Հայոց թեմական առաջնորդ Հովսեփ եպիսկոպոսին՝ հունիսի 12-ի հրամանագրին չհամաձայնելու եւ կայսերը նամակով Հայ Եկեղեցու դարավոր իրավունքները պարզաբանելու. կոնդակում Կաթողիկոսը հիմնավորելով, որ Հայ Եկեղեցու գույքը գոյացել է հայոց թագավորների եւ հայրենասեր իշխանների նվիրատվությունների հաշվին՝ ցանկանում էր, որ Հովսեփ եպիսկոպոսն իր նամակը ռուսաց կայսերը փոխանցի Ռուսաստանում Ամերիկայի դեսպանի միջոցով[14]:

Օգոստոսի 10-ին իրենց անհամաձայնությունն ու վրդովմունքն են հայտնում նաեւ Նոր Նախիջեւանի, Ախալցխայի, Բաքվի հայ համայքները:

Նույն օրը Մկրտիչ Խրիմյանը կոնդակով Երեւանի փոխթեմական Սուքիաս արքեպիսկոպոսին արգելում է մասնակցել եկեղեցիների գույքը քաղա-

11 ՀՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 87, թ. 112, ձեռագիր, բնագիր:
12 Տե՛ս ՀՀԱԱ, ֆ. 56, ց. 16, գ. 347, թ. 279, ձեռագիր, բնագիր:
13 Տե՛ս ՀՀԱԱ, ֆ. 56, ց. 16, գ. 347, թ. 280, ձեռագիր, բնագիր:
14 Տե՛ս ՀՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 87, թ. 111, ձեռագիր, բնագիր:

քական իշխանություններին հանձնելու գործին՝ միաժամանակ նմանատիպ բովանդակությամբ կոնդակներ ուղարկելով նաեւ բոլոր թեմական առաջնորդներին[15]:

1903 թ. օգոստոսի 10-ին Մկրտիչ Ա. Կաթողիկոսը գրությամբ դիմեց կայսերը՝ նրա հետ անձամբ տեսակցելու թույլտվություն ստանալու խնդրանքով, որում հայտնում էր. «...օգոստոսի 6-ին մի հեռագրով դիմեցի Ներքին գործոց նախարար Պլեւեին, խնդրելով, որ նախարարական ժողովի Բարձրագույն հաստատված օրենսդրության կիրառումը հետաձգվի, տալով ինձ հնարավորություն Ձեր Կայսերական Մեծության առ ոտս արկանելու ինձ հավատացած հոտի՝ ամբողջ հայ ազգի աղերսանքը հիշյալ օրենսդրության վերաբերյալ իմ ամենահպատակ միջնորդությամբ հանդերձ:

Ստանալով պատասխան Ներքին գործոց պ. նախարարից, համարձակվում եմ դիմել անմիջապես Ձերդ Մեծության, ամենահպատակորեն խնդրելով թույլ տալ ինձ անձամբ արկանելու առ ոտս Ձերդ Մեծության ամբողջ հայ հոգեւոր հոտի աղերսանքը եւ մատուցանելու հոգեւոր բացատրություններ եւ նկատումներ իմ կողմից, որ ինձ թելադրում է առ Ձերդ Մեծության եւ առ իմ հոտն ունեցած պարտքի զգացումը, Նախարարական ժողովի օրենսդրության կատարումը դադարեցնելու համար...»[16]:

Իրենց հետագա գործողություններով Հայոց Կաթողիկոսը, պատրիարքները, թեմական առաջնորդները, սինոդականները եւ ամբողջ հայ հոգեւոր դասը փաստում էին, որ չեն թույլատրելու օրենքի կիրառումը, ինչքանով որ դա հնարավոր է:

1903 թ. օգոստոսի 14-ին Կաթողիկոսը կոնդակով Սինոդին արգելում է իրագործել Սենատի՝ ռուսերենն իբրեւ պետական լեզու ընդունելու վերաբերյալ հրամանի կիրառումը[17]:

1903 թ. օգոստոսի 21-ին Հայոց Հայրապետը կոնդակով Սինոդին արգելեց հունիսի 12-ի որոշման վերաբերյալ առանց իր հրահանգի որեւէ բան ձեռնարկել[18]:

Այդ օրերին Հայոց Հայրապետը նամակով դիմեց Պարսկա-հնդկական թեմական առաջնորդ Սահակ եւ Աստրախանի հայոց թեմական առաջնորդ Արիստակես արքեպիսկոպոսներին՝ օրենքի դեմ իրենց բողոքի ձայնը բարձրացնելու խնդրով[19]:

Փաստորեն Մկրտիչ Ա. Խրիմյանը օրենքի դեմ ուղղված պայքարը տանում էր շատ հետեւողականորեն՝ դրա մեջ ներգրավելով նաեւ Արեւելյան

15 Տե՛ս ՀՀԱԱ, ֆ. 56, ց. 16, գ. 349, թ. 13, հայերեն եւ ռուսերեն, ձեռագիր, բնագիր:
16 «Ռեվոլուցիոն կոչեր եւ թռուցիկներ», Հայպետհրատ, Երեւան, 1960, էջ 661:
17 Տե՛ս **Միքայէլ Վարանդեան**, Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Երեւան, 1992, էջ 278-279:
18 Տե՛ս ՀՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 87, թ. 116-117, ձեռագիր, բնագիր:
19 Տե՛ս **Վ. Երկանյան**, նշվ. աշխ., էջ 245:

Հայաստանից դուրս գտնվող բոլոր հայ պատրիարքներին, թեմական առաջնորդներին եւ աշխարհասփյուռ հայությանը:

Կաթողիկոսը դաժան էր վարվում իր բռնած գիծը մերժող հոգեւորականների հանդեպ: Նա Սեւանի վանք աքսորեց Աստրախանի եւ Ստավրոպոլի երեք քահանայի, որոնք մասնակցել էին եկեղեցական գույքի հանձնմանը[20]:

1903 թ. հունսի 12-ին Հայ Եկեղեցու գույքի եւ կալվածքների բռնագրավման՝ ցարական հրամանագրի դեմ Հայոց Եկեղեցու եւ ժողովրդի միասնական պայքարն աստիճանաբար էր հասունացել: Ռուսական իշխանությունները դեռեւս ԺԹ. դարի վերջերին էին սկսել իրենց ոտնձգությունները հայ մշակույթի եւ կրթության դեմ: Միայն 1890-ականներին փակվել էր ավելի քան 300 հայկական դպրոց: Հրամանագրի ընդունումն այդ հայակործան, ռուսացման եւ ուծացման քաղաքականության բարձրակետն էր:

Վերոնշյալ փաստերն ու հանգամանքները ապացուցում են, որ Հայոց Եկեղեցին իր Հայրապետով, պատրիարքներով, թեմական առաջնորդներով եւ շարքային հոգեւորականներով, ինչպես նաեւ բովանդակ հայ ժողովուրդն իր աշխարհասփյուռ համայնքներով միակամ էին 1903 թ. հունիսի 12-ի՝ եկեղեցական գույքի եւ կալվածքների բռնագրավման օրենքի դեմ տարվող պայքարում, որն առաջ բերեց նաեւ հայ ժողովրդի ընդվզման բազում օրինակներ ինչպես Արեւելյան Հայաստանում եւ Կովկասում, նույնպես եւ մյուս հայ համայնքներում եւ ցարական իշխանություններին ստիպեց գիտակցել, որ գործ ունեն կազմակերպված եւ սեփական շահերը գիտակցող Հայ Եկեղեցու եւ ժողովրդի հետ:

Այս անգամ, բարեբախտաբար, ժողովուրդն ու Եկեղեցին այլեւս չընդունեցին հայ ազգի եւ մշակույթի դեմ ուղղված ոտնձգությունները եւ պայքարեցին մինչեւ հրամանագրի ի չիք դառնալը՝ 1905 թ. օգոստոսի 1-ը, երբ Նիկոլայ Ա. կայսեր Բարձրագույն հրամանով Հայ-լուսավորչական եկեղեցական կալվածքներն ու դրանց եկամուտները վերադարձվեցին իսկական տերերին՝ Հայ Եկեղեցուն եւ ժողովրդին:

20 Տե՛ս «Լումայ», 1905, թ. 6-7, էջ 5-7: